ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1991 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 17 ապրիլի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի հոկտեմբերի 4-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև առևտրատնտեսական կապերի և գիտատեխնիկական համագործակցության մասին» 1991 թվականի հոկտեմբերի 4-ին ստորագրված համաձայնագիրը փոփոխող արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 19-ի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար Կ. Ճշմարիտյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

Արձանագրությունն ստորագրվել է 2006թ. հոկտեմբերի 4-ին՝ Երևանում, 1991 թվականի հոկտեմբերի 4-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև առևտրատնտեսական կապերի և գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով:

Նշված համաձայնագրում փոփոխություններ կատարելը, իր հերթին, նպատակ ունի ընդլայնել և ամրապնդել Պայմանավորվող կողմերի միջև գոյություն ունեցող կապերը տնտեսական, արդյունաբերական և գիտատեխնիկական բնագավառներում, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված է Ռումինիայի՝ 2007 թվականի հունվարից Եվրոպական միությանն անդամակցելու հանգամանքով:

Արձանագրությունը վերոհիշյալ համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում: Այն նախատեսում է համաձայնագրում կատարել փոփոխություններ՝ ուղղված, մասնավորապես, երկու երկրների միջև տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնոլոգիական համագործակցությունը համակարգող համատեղ Խառը հանձնաժողովի խնդիրների շրջանակի ընդլայնմանը՝ կապված տնտեսական կապերի զարգացման և հեռանկարների ուսումնասիրության, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում Պայմանավորվող կողմերի ընկերությունների միջև կապերը և համագործակցությունը դյուրացնելու և խրախուսելու, ներդրումային դաշտում բարենպաստ պայմաններ ստեղծելու, տեխնոլոգիաների փոխանակման, ինչպես

նաև վերը թվարկված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ կազմակերպչական բնույթի գործառույթներ իրականացնելու հետ:

Հայկական կողմը պարտավորվում է կիրառել համաձայնագրի դրույթները՝ առանց խախտելու այն պարտավորությունները, որոնք բխում են Եվրամիությանը Ռումինիայի անդամակցությունից, ԵՄ կամ ԵՄ և նրա անդամ պետությունների և, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև կնքված ցանկացած համաձայնագրից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2006 թվականի հոկտեմբերի 4-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև առևտրատնտեսական կապերի և գիտատեխնիկական համագործակցության մասին» 1991 թվականի հոկտեմբերի 4-ին ստորագրված համաձայնագիրը փոփոխող արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

17 ապրիլի 2007 թվականի
ՍԴՈ-693